ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1

ք. Երևան, «03» օգոստոսի 2026թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Դ.Մաթևոսյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բ25» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ղազարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը՝ N 1.1 Հավելվածը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 160 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը

(օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը: Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողությունը փոխարինվում է շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրով:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **24 333 144 (Քսանչորս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար մեկ հարյուր քառասունչորս)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում չեն պահպանվել օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները	ՎԻՎՕ-ի 1578 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ համամասնորեն հաշվարկված

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը և պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2026 թվականի հունիսի 3-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կիանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մաթևոսյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«Այդի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Դանիելյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 1
«03» Օգոստոսի 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքներ

Աշխատանքի*							
Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չ/մ	Քանակը	Աշխատանքների կատարման վայրը	Ընդհանուր գին ՀՀ դրամ	Աշխատանքների կատարման ժամկետը
1.	Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքներ CPV-45451700/3	Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացումը կատարել՝ համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և ծավալաթերթ-նախահաշվի:	դրամ	1	ք.Երևան, Իսակովի պողոտա 10	24 333 144	Աշխատանքներն իրականացվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 160 օրացույցային օրվա ընթացքում:

*** Համաձայն քաղաքաշինության մասին օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթների մասնակիցը պետք է ունենա շինարարության իրականացման առնվազն 3-րդ դասի լիցենզիա՝ հետևյալ համապատասխան ներդիրներով՝ ծածկագիր 04, 05, 06, 08, 10:**

**** Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի դ/ պարբերության հիման վրա:**

*****Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թ.N 596-Ն որոշման հավելված 4-ի ցանկ 2-ի 2-րդ կետի շինարարության որակի տեխնիկական հսկողությունը փոխարինվում է շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրով:**

******Պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2026թ. հունիսի 3-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:**

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեք ՀՀդրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6	7
		1. Քանդման աշխատանքներ				
1	46-78	Բետոնե մասերի քանդում	$մ^3$	56.0	27,191	1,522,691
2	1-1594	Շինարարական աղբի բարձում 0.5$մ^3$ տարողությամբ էքսկավատորով ինքնաթափերի վրա	$մ^3$	56.0	1,126	63,075
3	ԳՆ.3 էջ 50	Շինարարական աղբի տեղափոխում ա/ինքնաթափերով 12կմ	տ	100.80	3,817	384,726
4	1-1605	Աշխատանքներ լցակույտում	$մ^3$	56.0	56	3,136
		2. Պատուհանի և մուտքի վիրաժ				
5	Տեղեկ.	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով դռների տեղադրում	$մ^2$	2.60	120,519	313,349
6	Տեղեկ.	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով վիտրաժների տեղադրում	$մ^2$	8.70	68,126	592,695
7	Տեղեկ.	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով /արտերկիր/ պատուհանների տեղադրում	$մ^2$	12.18	68,126	829,772
8	11--219կիրառ.	Բազալտե պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալիկներով 3սմ հաստությամբ L=6գծմ	մ2	1.80	12,122	21,819
		3. Հատակների իրականացում				
9	11--55	Հատակների ցեմենտավազե հարթաշերտ h=140մմ, ներառյալ ջերմամեկուսիչ շերտ	$մ^2$	78.0	8,647	674,486
10	11--55	Ինքնահարթեցնող շերտ h=20մմ	$մ^2$	48.0	1,129	54,176
11	11-135 կիրառ. շուկա	Հատակների երեսպատում կարպետի սալիներով ,սոսնձումով	$մ^2$	48.0	18,769	900,889
12	11--274 կիրառ.	Շրիշակների տեղադրում պոլիուրեթանից	գծմ	34.50	1,966	67,838
13	11-218	Հատակների երեսպատում պրեսգրանիտե սալիկներով 60*60սմ	$մ^2$	30.11	25,727	774,643
		4. Պատերի և առաստաղների իրականացում				
15	26-16	Պատերի ջերմամեկուսացում հանքաբամբակով 75մմ հաստությամբ S=118.8մ2	$մ^3$	8.9	49,667	442,529
16	Բ4-85 կիրառ.	Երեսապատում ֆաներայով 12մմ 1.5*1.5մ	$մ^2$	11.25	11,423	128,504

17	10-300 թ.2	Գիպսակարտոնե պատերի իրականացում	մ2	132.74	8,883	1,179,192
18	10-300թ.2կիրառ.	Գիպսակարտոնե առաստաղի իրականացում	մ2	68.5	8,435	577,792
19	8-140	Պատերի շարվածք 20սմ հաստությամբ պեմզոբլոկներից	մ³	0.94	29,429	27,663
20	15-664	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով. ծեփամածկմամբ	մ²	139.3	1,977	275,407
21	15-665	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով. ծեփամածկմամբ	մ²	48.0	2,383	114,365
22	10-155 ընդ.	Ստվերային պրոֆիլի տեղադրում	մ	37.0	5,221	193,182
		5. Կահավորում				
23	Շուկա	Գրասեղան	հատ	12.00	128,157	1,537,883
24	Շուկա	Գրասենյակային աթոռ	հատ	12.00	56,959	683,504
		6. Ջեռուցում				
25	18-192 կիրառ.	Ջեռուցման խողովակների մոնտաժում	կետ	7.0	75,545	528,816
26	18-180 կիրառ.	Ջեռուցման ռադիատորներ 1.5*0.19մ	հատ	6.0	146,688	880,125
27	18-165 կիրառ.	Կանգնակների խողովակաշարի փոխարինում	կետ	3.0	140,556	421,667
		7. Հովացում և օդափոխություն				
28	20-712 շուկա	Կենտրոնախույս օդամուղ /դրսի բլոկ/	կ-տ	1	727,631	727,631
29	20-876	Ներածման կանալային կայանք /ներսի բլոկ/	հատ	2	408,565	817,130
30	18-215 կիրառ.	Պղնձյա խողովակների հավաքածու	կ-տ	23	14,012	322,276
		8. Էլեկտրամատակարարում				
31	8-402-2	Համակարգչային մաս - FTR-50 մալուխի անցկացում գոֆրերով , մոնտաժ գետնից և պատերից մինչև սերվեր	մ	1250.0	529	661,163
32	11-510-11	Տեսախցիկների մալուխների մոնտաժ 70գծմ	գծ.մ	70.0	1,475	103,264
33	8-400-2	ՊՎՐ 5x10.0մմ² կտրվածքով պղնձյա ջիղերով մալուխի անցկացում բաշխիչ վահանից դեպի սենյակ մոնտաժում պատերով , ՊՎՔ մեկուսացումով, ամրակներով,	մ	45.0	7,973	358,807
34	8-400-2	Վարդակների ցանցի մոնտաժում ՊՎՐ 3x2.5մմ² կտրվածքով պղնձյա ջիղերով մալուխի անցկացում գոֆրերով, մոնտաժում պատերով ամրակներով,	մ	500.0	2,454	1,227,094

35	8-400-2	Լուսավորության մոնտաժում ՊՎՀ 3x1.5մմ² կտրվածքով պղնձյա ջիղերով մալուխի անցկացում գոֆրերով, մոնտաժում պատերով ամրակներով,	մ	200.0	2,167	433,451
36	8-591-2 կիրառ.	Ավտոմատների վահանակի հավաքում տեղադրում և մոնտաժում 44տեղ	հատ	1	456,200	456,200
37	10-97512 շուկա	Տուփերի տեղադրում հատակի վրա	հատ	12	19,303	231,633
38	8-591-8	Հոսանքի վարդակների տեղադրում տուփերի մեջ 250վ, 16Ա	հատ	24	2,130	51,126
39	8-591-8 կիրառ.	Հոսանքի ինտերնետ սարքավորումների տեղադրում տուփերի մեջ	հատ	48	2,714	130,275
40	8-591-8	Վարդակ 2տեղանոց տեղադրում տուփերի մեջ 250վ, 16Ա	հատ	8	2,130	17,042
41	8-591-8	Վարդակ 2տեղանոց տեղադրում տուփերի մեջ 250վ, 16Ա և ինտերնետ հանգույց	հատ	9	2,130	19,172
42	8-591-10	Անջատիչ երկու տեղով, թաքնված հաղորդալարի համար 220վ, 6Ա	հատ	2	3,143	6,286
43	8-593-1	Լուսավորության համար կետային լույսեր 3հատանոց	հատ	16	11,538	184,603
44	8-605-1	Ժապավենային լույսեր կախովի	հատ	12	69,846	838,156
44*	Շուկա	HikVision տիպի մուտքի/ելքի գրանցման կողպեք երեսի ճանաչումով	հատ	1	498,388	498,388
		Ընդամենը՝				**20,277,620**
		Ընդամենը՝ ԱԱՀ-ով				**24,333,144**

*** Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մաթևոսյան
Ստորագրություն

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան
Ստորագրություն

Հավելված 1.1
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով
հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«Բ25» ՍՊԸ-ն հավաստում է, որ ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ

«03» Օգոստոս 2026թ. Հավելված թիվ 2
ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	160 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մանթեսյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 2.1
«03» Օգոստոս 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ք.Երյան Իսակովի պողոտա 10 հասցեում գտնվող վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման նախագծով նախատեսված սարքերի. սարքավորումների նվազագույն երաշխիքային ժամկետները		
Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ 1 տարի		
N/N	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1	Ներհատակային կոնվեկտոր բնական կոնվեկցիայով	10 տարի
2	Կենտրոնախույզ օդամուղ (դրսի բլոկ)	3 տարի
3	Ներածման կանալային կայանք /ներսի բլոկ/	2 տարի
4	HikVision տիպի մուտքի/ելքի գրանցման կողպեք երեսի ճանաչումով	2 տարի

*Որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղում պարունակելու դեպքում հասկանալ <<կամ համարժեք>> բառերը

ք.Երևան Իսակովի պողոտա 10 հասցեում գտնվող վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման նախագծով նախատեսված նյութերի նվազագույն երաշխիկային ժամկետները և տեխնիկական բնութագրերը

Կապալի օբյեկտի երաշխիքային -ժամկետը 1 տարի

N	Նյութերի անվանումը և տեխնիկական բնութագրերը	նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
1	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով դռներ	2 տարի
2	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով վիտրաժներ	3 տարի
3	Ալյումինե սպիտակ գույնի 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով /արտերկիր/ պատուհաններ	2 տարի
4	Բազալտե պատուհանագոգեր	5 տարի
5	կարպետի սալիներ	5 տարի
6	Պոլիուրեթանից շրիշակներ	5 տարի
7	Պրեսգրանիտե սալիկներ 60x60 սմ չափսի	5 տարի
8	75 մմ հաստությամբ հանքաբամբակ	10 տարի
9	12 մմ հաստությամբ ֆաներա	2 տարի
10	Գիպսաստոարաթղտե սալեր 12.5 մմ հաստությամբ	2 տարի
11	Լատեքսային ներկ	5 տարի
12	Ստվերային պրոֆիլ	6 տարի
13	Վարդակ 2տեղանոց 250վ, 16Ա	2 տարի
14	Անջատիչ երկու տաղով թաքնված հաղորդալարի համար 250 վ 6 Ա	2 տարի
15	կետային լույսեր 3հատանոց	2 տարի
16	Ժապավենային լույսեր կախովի	2 տարի

Ք.Երյան Իսակովի պողոտա 10 հասցեում գտնվող վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման նախագծով նախատեսված սարքերի. սարքավորումների տեխնիկական բնութագրերը		
N/N	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1	Ներհատակային կոնվեկտոր բնական կոնվեկցիայով	Ջերմափոխանակիչ (Միջուկ)՝ Պղինձ-ալյումինե (պղնձե խողովակներ՝ ալյումինե թիթեղներով), ինչն ապահովում է բարձր ջերմատվություն և արագ տաքացում:Իրանի նյութ (Տուփ)՝ Ցինկապատ կամ չժանգոտվող պողպատ (հաստությունը՝ 1.0 - 1.2 մմ)՝ հակակոռոզիոն փոշեպատմամբ:Աշխատանքային ճնշում՝ 10-ից մինչև 16 բար (ատմ):Փորձարկման ճնշում՝ Մինչև 15-22 բար (կախված արտադրողից):Ջերմակրիչի առավելագույն ջերմաստիճան՝ 90 C - 110 C:Միացման տրամագիծ՝ G q" (ներքին պարուրակ): Ստանդարտ չափսեր երկարություն՝ 600 մմ-ից մինչև 3500 մմ:Լայնություն՝ 180 մմ-ից մինչև 420 մմ:Խորություն (Բարձրություն)՝ 65 մմ-ից մինչև 140 մմ (ցածր խորությամբ մոդելները հարմար են ոչ խորը հատակների համար)
2	Կենտրոնախույզ օդամուղ (դրսի բլոկ)	Օդամուղի (վենտիլյատորի) տեսակ՝ Կենտրոնախույզ (ռադիալ)՝ առաջ կամ հետ թեքված թիակներով:Արտաքին ստատիկ ճնշում (ESP)՝ 50 Pa-ից մինչև 150+ Pa (կախված մոդելից), ինչը թույլ է տալիս հաղթահարել օդատարների դիմադրությունը:Կոմպրեսորի տեսակ՝ Hermetic Scroll (պարուրաձև) կամ Rotary (ռոտացիոն)՝ հիմնականում ինվերտորային (Inverter) տեխնոլոգիայով:Սառնագենտ (Ֆրեոն)՝ R410A կամ էկոլոգիապես ավելի անվտանգ R32 / R454B:Ջերմափոխանակիչ՝ Պղնձե խողովակներ ալյումինե թիթեղներով (հաճախ հակակոռոզիոն Blue Fin կամ Gold Fin պատվածքով):Էլեկտրասնուցում՝ 220-240V / 1 ֆազ / 50Hz (փոքր հզորության համար) կամ 380-415V / 3 ֆազ / 50Hz (արդյունաբերական մոդելների համար):
3	Ներածման կանալային կայանք /ներսի բլոկ/	Արտաքին ստատիկ ճնշում (ESP): Կախված մոդելից՝Ցածր ճնշումային (Low static): 0 - 30 Pa (կարճ օդատարների կամ առանց խողովակների համար):Միջին ճնշումային (Medium static): 30 - 150 Pa (բնակարանների և գրասենյակների ստանդարտ ցանցերի համար):Բարձր ճնշումային (High static): 150 - 250+ Pa (երկար օդատարներով մեծ տարածքների համար):Օդի ծախս (Airflow rate): 300-ից մինչև 3000+ մա/ժամ (կախված բլոկի հզորությունից):Սառեցման/Ջեռուցման հզորություն: 2.2 kW-ից մինչև 28+ kW (մոտ 7,000 - 96,000 BTU/ժ):Էլեկտրասնուցում: 220-240V / 1 ֆազ / 50Hz:Միացման խողովակներ: Հեղուկային և գազային ֆրեոնային խողովակներ (տրամագիծը կախված է հզորությունից՝ 1/4", 3/8", 1/2", 5/8"):Աղմուկի մակարդակ: Ցածր արագության վրա՝ 23 - 35 dB(A) (բավականին անաղմուկ է, քանի որ բլոկը թաքնված է առաստաղում):

4	HikVision տիպի մուտքի/ելքի գրանցման կողպեք երեսի ճանաչումով	Էկրան և Տեսախցիկէկրան՝ 4.3 դյույմ LCD սենսորային (Touchscreen) գունավոր էկրան:Տեսախցիկ՝ 2 Մեգապիքսել (2 MP) երկակի լայնանկյուն օպտիկա:Լրացուցիչ տեխնոլոգիա՝ WDR (լուսավորության ավտոմատ հավասարեցում, որը թույլ է տալիս դեմքը հստակ ճանաչել նույնիսկ մթության մեջ կամ հակառակ լույսի տակ): Ճանաչման արագություն և պաշտպանություն ճանաչման արագություն՝ < 0.2 վայրկյան (աշխատում է ակնթարթային):Հեռավորություն՝ Դեմքը ճանաչում է 0.3-ից մինչև 1.5 մետր հեռավորությունից:Խաբեության դեմ պաշտպանություն (Anti-spoofing)՝ Սարքը հնարավոր չէ խաբել հեռախոսով պատկերված նկարով կամ տեսանյութով. այն ճանաչում է միայն իրական, կենդանի դեմքը:Դիմակի հսկողություն՝ Ունի ձայնային ազդարարման ֆունկցիա, եթե օգտատերը դիմակով չէ (ըստ անհրաժեշտության կարելի է միացնել/անջատել): Հիշողության Ծավալ (Տվյալների բազա)Դեմքերի քանակ՝ 1,500-ից մինչև 3,000 դեմքի կաղապար (կախված կոնկրետ մոդիֆիկացիայից):Պլաստիկ քարտեր՝ Աջակցում է մինչև 1,500 - 3,000 Mifare/EM-Marine տիպի քարտեր:Իրադարձությունների հիշողություն՝ Պահպանում է մինչև 150,000 անցման պատմության լոգ (թե ով, որ ժամին մտավ կամ դուրս եկավ):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Գ.Սաթխոյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ
(Շինարարության որակի տեխնիկական հսկողությունը փոխարինող)

ք. Երևան, **«03» մարտի 2026թ.**

Սույն երաշխավորագրով **«Բ 25»** ՍՊԸ-ն, ՀՎՀՀ՝ 00209252, պետական գրանցման վկայական՝ 264.110.1090979, քաղաքաշինության բնագավառի լիցենզիա՝ III-րդ դասի), այսուհետ՝ **Կապալառու**, ի դեմս ընկերության տնօրեն՝ Արա Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, հանդիսանալով պատասխանատու շինարարական կազմակերպություն, սույնով երաշխավորում է.

1. **Օբյեկտի տվյալները և երաշխիքը**

«03» 03 2026թ. կնքված թիվ ՊԵԿ-ՀՄԱՇՁԲ-26/1 շինարարական կապալի պայմանագրի համաձայն՝ Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար իրականացվող՝ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցում II-րդ կատեգորիա շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՀՀ քաղաքաշինական օրենսդրությանը, գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և հաստատված նախագծին:

2. **Տեխնիկական հսկողության գործառույթների ստանձնումը**

Համաձայն ՀՀ Կառավարության N 596-Ն որոշման պահանջների՝ Կապալառուն իր վրա է վերցնում տվյալ օբյեկտի շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման ողջ գործառույթներն ու պատասխանատվությունը ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված ծավալով: Կապալառուն պարտավորվում է պատշաճ վարել շինարարական աշխատանքների կատարման մատյանները և ժամանակին կազմել կատարողական փաստաթղթերի փաթեթը:

3. **Պատասխանատվության ժամկետները**

Կապալառուն սույնով ստանձնում է **լիակատար իրավական և նյութական պատասխանատվություն** շինարարական աշխատանքների ընթացքում և օբյեկտի ավարտից հետո՝ պայմանագրով ու օրենքով սահմանված երաշխիքային ժամկետում ի հայտ եկած թերությունների, շեղումների կամ անվտանգության կանոնների խախտման համար:

4. **Թերությունների վերացումը**

Շինարարության ընթացքում կամ երաշխիքային ժամկետում որակի որևէ թերություն կամ նախագծային շեղում հայտնաբերվելու դեպքում, Կապալառուն պարտավորվում է իր սեփական միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել դրանք և հատուցել պատճառված վնասները:

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«03» հունվարի 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Աշխատանքի*														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5112	45451700/3	Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 10 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում մաքսային մոնիտորինգի կենտրոնի կառուցման աշխատանքներ							24 333 144	24 333 144	24 333 144	24 333 144	24 333 144	24 333 144	**24 333 144**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Դ.Մաթևոսյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բ25» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ,
Երևան-Արտաշատ խճուղի 27/5
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11817065159000
ՀՎՀՀ 00209252
«Բ25» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Ղազարյան

Հավելված թիվ 4
«03» Օգոստոս 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«03» Օգոստոս 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
« 03 » մարտի 2026թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«--------/--------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և
_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.